

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
(Ընդհանուր ակնարկ)

Ձեռագիր գիրքը որոշակի հանգամանքներում, տեղում և ժամանակում ստեղծված պատմամշակութային երևույթ է, իր ժամանակի գրչության արվեստը մարմնավորող հոգևոր ու նյութական մշակույթների հուշարձան: Հայ գրչության արվեստի սկզբնավորումը և հայկական ձեռագրերի ծնունդը արդյունք են գրերի գյուտի. Վաղարշապատ վերադառնալիս՝ Մաշտոցը հայոց այբուբենի հետ ուներ նաև Հռոփանոսի ձեռքով գրված առաջին հայագիր, հայերեն ձեռագիրը[1]:

Ձեռագիրը սկզբնապես գրվում էր էջ առ էջ, այնուհետև՝ նկարազարդվում և միայն վերջում՝ կազմվում: Կազմը, որ ձեռագրի գոյացման կարևոր, ավարտական փուլն է, իր ծագումով ու զարգացմամբ սերտորեն կապված է մագաղաթի գործածության և գրքի առաջացման հետ: Մագաղաթի հայտնագործումից առաջ գործածվող պապիրուսը դյուրաբեկ էր, չծալվող (ծալվելիս փշրվում էր), ուստի և նրանից պատրաստում էին միայն մի երեսը գրված փաթույթներ. հետագայում այս ձևով գրվում էին միայն արքայական հրովարտակները և եկեղեցական կոնդակները[2]:

Ձեռագիր մատյանների ի մի կարված տետրերը (պրակներ, մամուլներ) հնում պահում էին կտավե փաթեթների մեջ, ծածկում գործվածքով կամ կաշվով՝ դնելով փայտե, մետաղե կամ փղոսկրե տուփի մեջ: Հետագայում տախտակե միջուկով կաշվե կազմը փոխարինեց տուփին[3], այդ պատճառով

---

[1] Տե՛ս **Ա. Մաթևոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺԲ դդ., Երևան, 1988, էջ Ե (այսուհետ՝ **Ա. Մաթևոսյան,** Ե—ԺԲ դդ., էջ ...):

[2] Տե՛ս **Գ. Հովսեփյան,** Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 2, 4:

[3] Ժողովածուների հիշատակարաններում հաճախ է հանդիպում «ի մի տփի ժողովեալ» արտահայտությունը. սա՝ ձեռագրերը տուփի մեջ պահելու սովորության անուղղակի արձանագրում է:

Էլ կազմին տրվեց տուփի տեսք՝ երկու փեղկ, մեջք կամ թիկունք և դրոնակ (մետաղե շատ կրկնակազմերի դռնակը երեք կողմից է, այսինքն՝ սրանց կազմն իսկը տուփ է):

Մաղագաթի գյուտով կատարելագործվում է ձեռագրի արտաքին ձևավորումը՝ կազմը, որ սկզբնապես ունեցել է գրված թերթերի (պրակների) պահպանման նպատակ, իսկ հետագայում դարձել է նաև զարդարանք, կիրառական արվեստի մի դրսևորում—ճյուղ: Կազմը պատրաստում էին կազմարարները, որոնք կոչվել են նաև գրակապ, կարող, կապող, կազմող, կազմիչ և այլն:

Զ դարից պահպանվել է «Էջմիածնի Ավետարանի» փղոսկրե կազմը[4]: Ձեռագրի փեղկերից յուրաքանչյուրն ունի փղոսկրե քանդակազարդ հինգ սալիկ. մեկական՝ կենտրոնում, երկուական (մեծերը) զբաղեցնում են կազմի վերին և ստորին մասերն ամբողջությամբ, իսկ մյուսները՝ կենտրոնական սալիկի բարձրությամբ՝ նրա աջ և ձախ կողմերը: Փեղկերից յուրաքանչյուրը ունի 30,3×37 սմ մեծություն, սալիկները՝ 0,9 սմ հաստություն: Սալիկները եզրափորված և ագուցված են միմյանց, ապա՝ ամրացված մետաղե գամերով, ի վերջո՝ սոսնձով փակցված հաստ մագաղաթի վրա՝ վերջինիս ներսի երեսին (կաշվի՝ մսակողմին): Մագաղաթը երեսապատված է զոլավոր կտավով: Երկրորդ փեղկի վերին սալիկի աջ անկյունը կտրված է (4,4 սմ երկայնքով և 2,2 սմ լայնքով). մյուսներն ամբողջական են[5]: Գ. Հովսեփյանը գրել է. «Զ դարից մնացել են ոչ սակաւաթիւ փղոսկրից, քանդակներով զարդարուած **դիպտիխներ** կամ կազմի տախտակներ, որ պահուած են այլ և այլ թանգարաններում գեղարուեստական-հնագիտական բարձր արժէքով. այդ շրջանին է պատկանում և նրանցից մի քանիսին մեծ նմանութիւն ունի և մեր կազմը, ոչ միայն արուեստի ընդհանուր ոճով, այլ և նոյն իսկ արտաքին ձևի կազմութեամբ և մասամբ պատկերների բովանդակութեամբ: Մեր կազմի երեսները բաղկացած են հինգ հինգ կտորներից, երեքը միջին մասում և մէկ մէկ վերևից և ներքևից, աւելի երկար, քան միւսները: Ճիշդ նոյն հնգամասնեայ արտաքին կազմութիւնն ունին Բաւենայում, Վատիկանում և Փարիզի Ազգային մատենադարանում պահուող տախտակները»[6]:

Ձեռագիր գրքերը գրվում, արտագրվում, թարգմանվում, կազմվում էին հիմնականում վանքերում: Այդ իսկ պատճառով կազմարարության արվեստը սերտորեն կապված է վանք-դպրոցների հետ:

Քաղաքական կացության տևական աննպաստությունը մեծապես արգելակել է Հայաստանի տնտեսական և մշակութային առաջընթացին: Թ—ԺԱ դարերում տեղի ունեցած հասարակական-տնտեսական վերելքն ու առաջադիմությունը նոր պայմաններ ստեղծեցին գիտության, գրի, գրականության և արվեստների զարգացման համար: Բագրատունյաց թագավորության ժամանակ բուն Հայաստանի տարածքում, ապա՝ Կիլիկյան Հայաստանում հնուց եղած ու նորահաստատ խոշոր դպրոցների սաները, հիմնական առարկաներից բացի, ուսանում էին նաև գրչություն, մանրանկարչություն, կազմարարություն:

---

[4] ՄՄ ձեռագիր № 2374:

[5] Տե՛ս **Ա. Մաթևոսյան**, Էջմիածնի Ավետարանը, «Էջմիածին» ամսագիր, 1990, № Բ—Գ, էջ 74—75:

[6] Տե՛ս **Գ. Հովսեփյան**, Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 21—22:



10379

Այս վերելքի շնորհիվ, Ժ դարից սկսած, կազմարարությունը դարձել է հատուկ հմտություն պահանջող առանձին արհեստ, որի հումք-նյութերն էին կաշին, կտավը կամ մետաքսը, փայտը, արծաթը, ոսկին և այլն:

Գրչության արվեստը բարդ՝ խմբական աշխատանքի արդյունք է. այստեղ իրենց բաժինն ունեն ո՛չ միայն գրիչները ու նկարիչները, մագաղաթ և գույնզգույն թանաք ու ներկեր պատրաստողները, այլև՝ կազմարարները: Գրիգոր Տաթևացին (1346—1410 թթ.) վկայում է, որ Տաթևի դպրապետ Հովհան Որոտնեցին (1315—1388 թթ.) իր աշակերտներին սովորեցնում էր նաև մագաղաթ պատրաստելը. **«Զմագաղաթս նոյն ինքն մեծ վարդապետն իր ձեռօքն գործեաց և մեզ ուսոյց զսոյն արուեստ»:** Հովսեփ Աղթամարցին (ԺԶ դ.) վկայում է, որ Արգելանի վանքի դպրոցի ուսուցիչը նույնպես սովորեցնում էր մագաղաթ պատրաստելը, մագաղաթի վրա գրելն ու նկարելը. **«Բազում աշխատութեամբ ուսոյց զմեզ զարուեստքն՝ զշինել մագաղաթիս և զգրել սորին, այլ և զնկարելն»[7]:**

Գրիչների, ծաղկող-նկարիչների և ստացողների հետ միասին, ձեռագրերում շատ են նաև կազմարարների անունների հիշատակությունները: Թ դարում հիշատակվում է Գեորգ կազմողը. **«Աղաչեմ յիշել զմեղսամակարգ և զյետին կրաւնաւորս՝ զԳէորգ կազմիչ գրոցս, և Քրիստոս վայելել տացէ. ամեն»[8].** Ժ դարում (977 և 999 թվականներին)՝ Գեորգ և Տիրանուն կազմարարները[9], ԺԱ դարում՝ Ովհաննեսը (1001 թ.)[10], Սարգիսը (1088 թ.)[11] և Խաչատուրը[12]: Շատ հաճախ են հիշվում. ԺԳ դարի Բ կեսին՝ արքայական մատյանների և ընտիր ձեռագրերի կազմարար Առաքել Հնազանդենցը, որի ուսուցիչն էր Սարգիս քահանան[13], ԺԶ դարում՝ Փիլիպպոսը[14], ԺԷ դարում՝ Ազարիան (Նոր Ջուղա)[15], ԺԸ դարում՝ Տեր Ղազար[16], Տեր Մխիթար[17], Տեր Մեսրոպ[18] կազմարարները և ուրիշներ:

1646 թ. Շեքիրիցանց Տեր Մարտիրոսի պատվերով և Դդմաշենի (Դեմդեմաշեն) ամբողջ ժողովրդի հանգանակությամբ Թումա գրիչը նորոգել ու կազմել է 988 թվականի Սքանչելագործ կամ Սուրբ Հովհաննես կոչվող Ա-

---

[7] Հմմտ. **Ա. Մովսիսյան,** Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10—15-րդ դդ.), Երևան, 1958, էջ 386—387:

[8] Տե՛ս ՄՄ ձեռ. № 5547, 7ա. նաև՝ **Ա. Մաթևոսյան,** Ե—ԺԲ դդ., էջ 45:

[9] Տե՛ս **Ն. Պողարյան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հ. Զ, Երուսաղեմ, 1972, էջ 256—257, ձեռ. № 1862, **Ալիշան,** «Հայապատում», էջ 309—312 և **Հովսեփյան,** Հիշատակարանք, էջ 163—168, **Ա. Մաթևոսյան,** Ե—ԺԲ դդ., էջ 62, 63 և 73:

[10] Տե՛ս **Բ. Սարգիսյան,** Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, ձեռ. № 126, էջ 562 և **Ա. Մաթևոսյան,** Ե—ԺԲ դդ., էջ 78:

[11] Տե՛ս ՄՄ ձեռ. № 10780 (79ա) և **Ա. Մաթևոսյան,** Ե—ԺԲ դդ., էջ 115:

[12] Տե՛ս Փարիզի Ազգային գրադարան, հայկական ձեռագիր № 178 և **Ա. Մաթևոսյան,** Ե—ԺԲ դդ., էջ 129:

[13] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 9509, 10675, 199: **Գ. Հովսեփյան,** Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 5: **Ա. Մաթևոսյան,** Ե—ԺԲ դդ., էջք 297, 301, 313, 316, 319, 332, 361, 366, 368, 407, 410, 446, 461, 487:

[14] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 4812, 9841:

[15] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 451, 3036, 3194, 3829, 4017, 10998:

[16] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 38, 330, 1078, 2546, 3685, 4932, 6611, 6683, 7773, 8508, 8678, 9431, 10526:

[17] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 2389, 3971, 4422, 6427, 7633, 7737, 8168, 8370:

[18] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 4088, 6560, 9056, 9398, 10660:

վեստաբանը (ՄՄ, ձեռ. № 8906)։ Նա գրել է. «...**Եւ ‹ես› դարձեալ աղաչեմ՝ կողկողագին սրտի, և լալագին աչօք և փղցկեալ սրտի աղաչեմ... յիշեսջիք ի սուրբ յաղաթս ձեր զԴրդմաշինցոյ ժողովուրդն, ես առաւել զքահանայքն՝ սրբասցեալ զտէր Յովանէս ծերունին, զտէր Առաքելն, և զտաճուտէր Դաւէլն, և զօրվաթավոր Մաստուրն, և առհասարակ ամենայն Դրդմաշինցոյ ժողովրդեանն՝ առ Աստուած փոխեցելոցն, կենդանեացն և ննջեցելոցն, ամենեցուն յի սրտի ողորմի ասացէք սոցայ, վասն զի օգտակար եղեն Ճէբիրիցանց տէր Մարտիրոսին, փոքր ի շատէ ողորմած եղեն և տվին կազմել զսրբազան սուրբ Աւետարանս և Սքանչելագործ, որ Սուրբ Յովանէս կոչի անուամբ...»**[19]։ Այնուհետև, նկարագրելով ձեռագրի վատ վիճակը և իր աշխատանքի դժվարությունը, նշել է. «**Հա՛յրք և եղբա՛յրք, մի՛ մեղադրէք ինձ, զի յոյժ խախտեալ էր և տրորեալ բազմաժամանակեայ. քանզի է (7) հարիւր տարի անցեալ էր, և ապա ի մեզ հասեալ՝ կազմեցաք։ Զսուրբ Աւետարանս բազում փորձանաց հանդիպեալ էր՝ պէսպէս, ազգի ազգի, ոմն ծամանակ ի գերութեան ի ձեռս անօրինաց. և անօրէնք զսուրբ Սքանչելագործ Աւետարանս ձգեալ ի մէջ հրոյ, վասն զի այրեսցէ. և սա զօրութեամբն Քրիստոսի և իւր սքանչելագործութեամբն, որ է ինքն Քրիստոս, և Քրիստոսի քաղցրաշունչ վարս և տնօրէնութիւնս ի իւր կառուցեալ, առաջի չապրազարծաց թողուցեալ անկաւ ի գետն /// [Խաչեն] և անդ ի մէջ գետոյն կացեալ։ Եւ ունի սուրբ Աւետարանս նշան՝ առ ինքն ունելով հրոյ այրեալն և զթլթփիկ ձկան կերածն։ Տեսողացն՝ փառս տան Աստուծոյ և սուրբ Աւետարանիս // ///։ Բայց և ես՝ տկարս և սապղար հոգով, յերես անկեալ աղաչեմ, ո՛վ սուրբ լուսակիր դասք քահանայիցդ, զի վասն այսորիկ ոչ եկն ի տեղ իւր կազմ և հորոգութիւն. քանզի ողբն և առաջին ճակատն և յետի լուսանցն բոս էր և որպէս գլուխն, զի տեսանէք պատրոյկն և շիրազն ոչ եկն ի տեղ իւր. քանզի ճղվածն և ձկան կերած տեղն կարկատան ո՛չ էառ, վասն այսորիկ ո՛չ եկն ի տեղի ամենայն բանն կազմիս, վասն այն աղաչեմ զձեզ, զի անմեղադիր լերուք ինձ, և դուք ազատեալ լիջիք ի մեղաց ձերոց. ամէն։ Հայր մեր**»[20]։

Իր աշխատանքի բարդության մասին նշել է նաև մի այլ ձեռագրի հեռագա (1730 թ.) կազմող Ներսեսը. «**թուին Հայոց ՌՃՀԹ (1730), բազում աշխատանօք ոպայեցի, նշայեցի, կոկեցի և դժուարութեամբ իրար ձգեցի և կազմեցի, զոր տեսանէք և անմեղադիր լերուք, զի կար իմ այսքան էր. խընդրեմ յիշել զփոշիս ոսկ[ա]ցն ձեր զՆերսէս և զուսուցիչն իմ միով Հայր մերիս...**»[21]։

Ինչպես արդեն նշել ենք, Ժ դարից ի վեր կազմարարությունը դարձել է առանձին արհեստ, կազմերի զարդարումը սերտ կապ ունի մանրանկարչության, քանդակագործության և զարդարվեստի ընդհանուր զարգացման հետ։ Կազմի համար հիմնականում օգտագործում էին հատուկ դաբաղած կաշի, որը, սովորաբար, ներկված էր լինում շագանակագույն, բաց մոխրագույն կամ այլ երանգով։ Ձեռագիրը պրակ առ պրակ գրվելուց հետո հանձնվում էր կազմարարին, որը նախապես ընտրում, մշակում էր կազմի կա-

---

[19] ՄՄ ձեռ. № 8906, էջ 224ա։

[20] ՄՄ ձեռ. № 8906, էջ 225բ։ Հմմտ. **Վ. Հակոբյան,** հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641—1660), հ. Գ, Երևան, 1984, էջ 222—223, հիշատակարան 368։

[21] ՄՄ № 2843, էջ 317բ։

շին, պատրաստում միջուկ-տախտակը, աստառի ծաղկաձկար կտավը (հաճախ՝ մետաքսե ոսկեթել պատկերազարդ գործվածք), հին ձեռագրի թերթերից ճախապատրաստում պահպանակը։ Կազմի տախտակի փոխարեն հազվադեպ օգտագործում էին նաև մագաղաթի կամ թղթի կտորներ, հին ձեռագրի մասեր[22]։ Կազմարարի առաջին գործը պրակները կամ թերթերն ի մի կարելն էր, որն արվում էր սեղանի (դազգահի) վրա։ Ամուր թելից հյուսված բարակ պարանը, որի վրա հավաքվում ու ամրացվում է պրակը, կոչվում է **անթել** (այուն թել). սրա՝ կազմի տախտակ-միջուկներին ամրացվելիք, միատեղ կարված պրակներից դուրս մնացած ծայրերը կոչվում են **պատույգ։** Սեղան-դազգահի վրա «այուների» նման ամրացնելուց հետո, «այուների» դիմաց բոլոր պրակների վրա անցքեր էին բացվում. թելը պրակի անցքից դուրս հանելով՝ փաթաթում էին անթելի վրա, կրկին վերադարձնում պրակի մեջ, ապա՝ նույն գործողությունը կատարում հաջորդ անթելի հետ։ Անթելերից զատ, պրակներն իրար միացվում են նաև ծայրերում. ծայրամերձ անթելի անցքից թելը տարվում և ագուցվում է ծայրում հյուսած անթելին, որը կոչվում է **բարձիկ։** Սա էլ իր հերթին միանում է թիկնամասի կաշվին ամրացված հյուսածո անթելին, որ կոչվում է **կապտակ,** ապա միասին կազմի տախտակին են ամրացվում նրա վրա բացված անցքով և փորվածքով։ Մինչ այդ, անթելերը նույն եղանակով՝ պատույգներով միացվում էին կազմատախտակին և կաշեպատվում[23]։

Կաշվե կազմերի զարդարումը նույնպես կատարվում էր ոսկերչության բնորոշ ճարտարվեստով (technologia)։ Դեռևս կիսաթաց կաշին կամ մագաղաթը զարդարում էին մի քանի եղանակով. ավելի հաճախ կիրառվում էր սրածայր, բայց չկտրվող գործիքով սեղմելով գծագրելու եղանակը։ ԺԱ—ԺԲ դարերի կաշեկազմերի վրա երևում են աղեղներով միահյուսվող՝ իրար հատող շրջագծեր, որոնք կազմում են աստղաձև կամ վարդյականման զարդեր։ ԺԲ դարում հանդես է գալիս կազմերը նկատներով[24] զարդարելու եղանակը, որն առավել մեծ չափերով օգտագործվում է հետագա դարերում։ Նկատի ծայրը դրվում էր թաց կաշվի վրա, ապա մուրճի թեթև հարվածով նրա զարդը դաջվում էր կազմին[25]։ Զարդը կաշվի վրա վերարտադրվել է նաև մետաղե զարդավոր տախտակով ճնշելու եղանակով՝ առատպելով[26]։ Կաշվե կազմերի անկյուններում փակցնում էին մետաղե թիթեղներ՝ ավետարանիչների խորհրդանիշ (մարդ, առյուծ, եզ, արծիվ) պատկերներով, իսկ ավելի ուշ ձեռագրերը նաև կոստղում էին, այսինքն՝ կազմի վրա ամրացնում էին կլոր կամ գմբեթաձև գլխիկներով մետաղե կամ արծաթե գամեր։

Կազմի հաստությունը, ժամանակը, կազմելու վայրը կարելի է որոշել կաշվի մշակման եղանակով, որակով, գույնով, կազմաստառ գործվածքով՝ ներ-

---

[22] Տե՛ս ՄՄ ձեռ. № 3558, 3559։

[23] Տե՛ս **Ա. Մաթևոսյան,** Էջմիածնի Ավետարանը, «Էջմիածին» ամսագիր, 1990, № Բ—Գ, էջ 75, ծնթ. 39 (ընդգծումները մերն են—Ա. Մ.)։ Տե՛ս նաև **Բ. Առաքելյան,** Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1958, էջ 317—318։

[24] Նկատը մետաղե (բրոնզե) գլանաձև, բառանիստ կամ ձվաձիր կտրվածքով ձող է, որի մի ծայրին լինում է խորաքանդակ (փոս ընկած) զարդ։

[25] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1958, էջ 319։

[26] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Կազմերի զարդարման արվեստը միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 185։

սի կտորով, պահպանակով: Առավել վճռորոշ են կազմի վրայի զարդերի ոճական և ճարտարվեստական առանձնահատկությունները:

Ձեռագրերի կազմերի համար, կաշվից բացի, օգտագործել են նաև արծաթ և ոսկի, որոնցից ոսկերիչները կրկնակազմեր են պատրաստել՝ իրենց արհեստի նուրբ ձևերն արտահայտելով ձուլման, ճնշման, կռման, դրվագման, ոսկեթելի և արծաթաթելի ու հատիկավոր հյուսվածքի (չիֆթիշի) եղանակներով, փորագրությամբ, սևադով, արծնապատումով, ոսկեզօծմամբ և այլն[27]:

Ձուլման եղանակը ոչ միայն հին է, այլև՝ գերիշխող: Ձուլման համար վարպետները օգտագործել են տարբեր տեսակի կաղապարներ: Այս եղանակով է պատրաստված մեր ձեռագրերի արծաթե կազմերի մի մասը և, հատկապես, նրանց վրա եղած զարդերը[28]: Ձուլման ճարտարվեստի հետ միասին կիրառվել են նաև կռելու և դրվագելու եղանակները, որոնք սերտորեն փոխկապված են միմյանց. սկզբում արհեստավորը կռելով նախապատրաստում էր մետաղը, ապա՝ անցնում դրվագմանը՝ արտաքին գեղարվեստական ձևավորմանը[29]: Շատ տարածված է եղել նաև դրոշմելու եղանակը, որ նման է դրվագմանը: Եթե դրվագումով որևէ իր պատրաստելու ժամանակ յուրաքանչյուր օրինակի համար պետք էր առանձին գծագրություն, իսկ ցանկալի քանդակը արծաթի կամ ոսկու թերթիկի վրա պատկերվում էր միայն մուրճի բազմաթիվ հարվածներից հետո, ապա դրոշմելու համար անհրաժեշտ էր ընդամենը մի մոդել, որից յուրաքանչյուր անգամ մուրճի մեկ հարվածով ստացվում էր մեկ օրինակ: Դրոշմելու ճարտարվեստի դեպքում, սակայն, պահանջվում էին ավելի նուրբ մետաղե թերթիկներ, որպեսզի քանդակը մեկ հարվածով հստակ արտահայտվեր:

Արծաթե և ոսկե կրկնակազմեր պատրաստվել են նաև թելի և հատիկավոր հյուսվածքի ճարտարվեստով[30]: Կրկնակազմերը հաճախ ամբողջովին պատրաստում էին հյուսվածքով, երբեմն էլ՝ թելահատիկավոր եղանակով կիրառված է դրվագման և փորագրման ճարտարվեստի հետ խառը[31]: Քիչ չեն նաև սևադապատման, արծնակիտման (էմալապատման) եղանակներով զարդարված կրկնակազմերը[32]:

Այսպիսով, ձեռագիր մատյանների կազմարարությունը սկսվելով պարզունակ ձևերով և դրսևորումներով՝ դարձել է ինքնուրույն արվեստ-արհեստ, անցել զարգացման մի երկար ճանապարհ, որի հանգրվաններն ու դրվագները կարող են մանրամասն ու համակարգված քննության:

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

---

[27] Տե՛ս **Վ. Ա. Աբրահամյան,** Արհեստները Հայաստանում 4—13-րդ դդ., Երևան, 1956, էջ 113:

[28] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 5592, 5651, 6763:

[29] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 6792, 5580, 5736, 9273, 5653:

[30] Տե՛ս ՄՄ ձեռ. №№ 6785, 6788:

[31] Տե՛ս **Վ. Ա. Աբրահամյան,** Արհեստները Հայաստանում 4—13-րդ դդ., Երևան, 1956, էջ 151:

[32] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 121—153: